

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՊՄԻ-ի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2014թ. օգոստոսի 29-ի խորհրդի թիվ 1 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի խորհրդի 2014-2015 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:
2. Ֆակուլտետի ուսումնական պրոցեսի իրականացման ժամանակացույցն ըստ կուրսերի:
3. Ֆակուլտետում առկա մասնագիտությունների ուսումնական պլաններում մասնակի փոփոխություններ կատարելու հարցի քննարկում:

ԼՍԵՑԻՆ՝

1. Ֆակուլտետի խորհրդի 2014-2015 ուստարվա աշխատանքային պլանի հաստատման մասին հարցը:

Հաղորդեց՝ Ա.Խաչատրյանը:

Արտահայտվեցին՝ Ա.Մաթևոսյանը, Կ.Հովհաննիսյանը, Բ.Սերոբյանը:

Որոշեցին՝ հաստատել 2014-2015 ուստարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ՝

2. Ֆակուլտետի ուսումնական գործընթացի իրականացման ժամանակացույցն ըստ կուրսերի:

Հաղորդեց՝ Ա.Խաչատրյանը:

Արտահայտվեցին՝ Գ.Աղանյանը, Ե.Տոնոյանը:

Որոշեցին՝ հանձնարարել ֆակուլտետի դեկանատին մինչև օգոստոսի 31-ը վերջնական տեսքի բերել ուսումնական գործընթացի իրականացման ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ՝

3. Ֆակուլտետում առկա մասնագիտությունների ուսումնական պլաններում մասնակի փոփոխություններ կատարելու հարցի քննարկում:

Հաղորդեց՝ Բ. Սերոբյանը, Կ.Հովհաննիսյանը:

Արտահայտվեցին՝ Ե.Տոնոյան, Ա.Մաթևոսյան, Ա.Խաչատրյանը:

Որոշեցին՝ հաստատել ֆակուլտետի ամբիոնների նիստերում քննարկված և մասնակի փոփոխությունների ենթարկված նոր ուսումնական պլանները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝
քարտուղար՝

դոցենտ Ա.Խաչատրյան
Վ.Գրիգորյան